

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

ք. Գավառ

31.05.2019թ. ժամը 11.00

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 52-ը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր ու բաժինների վարիչներ, մարզային ենթակայության և Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարության ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ ու զինղեկներ, «Գեղարքունիք» ջուր օգտագործողների ընկերության տնօրեն Կարեն Սարգսյանը, «Գեղարքունիք» ջուր օգտագործողների ընկերության տնօրենի տեղակալ Հայկ Սիոյանը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ծրագրերի իրականացման վարչության Գեղարքունիքի մարզային համակարգող Խորեն Բադալյանը, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վահե Գուլանյանը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գիտության ու խորհրդատվության մարզային բաժնի վարիչ Սաշա Մելքոնյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին:

- /Զեկ. Համբարձում Համբարձումյան – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/
- /Հարակից զեկուցող Կարեն Սարգսյան – «Գեղարքունիք» ջուր օգտագործողների ընկերության տնօրեն/

2. 2019 թվականի մայիսի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացված իրավական ու մասնագիտական հսկողության արդյունքների մասին:

- /Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

3. «Պատիվ ունեմ» և «Ես եմ» ծրագրերի մասին:

/Զեկ. Տիգրան Հակոբյան - մարզպետարանի աշխատակազմի
գորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ/
/Հարակից գեկուցող Վարդան Մամիկոնյան - Հայաստանի
Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական
կոմիսարիատի գորակոչային բաժնի պետ/

4. Այլ հարցեր:

Ելույթներ ունեցան՝

Վարդան Մարգարյան	- Գեղամասար համայնքի ղեկավարի տեղակալ
Արման Ղազարյան	- Զոլաքար համայնքի ղեկավար
Սուլիկո Շուշանյան	- Շողակաթ համայնքի ղեկավար
Տարոն Քոչարյան	- Կարճաղբյուր համայնքի ղեկավար
Վահե Գուլանյան	- «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Հայտարարությունով հանդես եկավ՝

Համբարձում Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2019 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու և սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) 2019 թվականի հունիսի 8-ի համապետական շաբաթօրյակը պատշաճ կազմակերպելու և իրականացնելու համար աշխատանքներ տանել համայնքների ազգաբնակչության, համայնքապետարանների և ՀՈԱԿ-ների աշխատողների, համայնքների տարածքներում գործող կազմակերպությունների ու տնտեսվարող սուբյեկտների հետ և ապահովել նրանց մասնակցությունը շաբաթօրյակին.

3) մարզպետարանից ստացված շրջաբերականներին պատասխանել հասցեական և սահմանված ժամկետներում.

4) համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերը «Գեղարքունիք» ջուր օգտագործողների ընկերությանը հանձնելու գործում ցուցաբերել մասնակցություն և աջակցություն.

5) աշխատանքներ տանել իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունները սահմանված ժամկետներում վերացնելու և այսուհետ բացառելու ուղղությամբ.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցնել և/կամ արգելել համայնքների տարածքներում իրականացվող ինքնակամ շինարարական աշխատանքները և դրանք բերել իրավական դաշտ.

7) համայնքների անասնաբույժների հետ միասին ակտիվ աշխատանքներ տանել խոշոր եղջերավոր անասունների մեջ բրուցելյոզ հիվանդության տարածումը բացառելու համար.

8) ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել համայնքներում կատարված ցանքերի իրական ամփոփիչ թվերը.

9) Սևանա լճի ափամերձ՝ ջրածածկման ենթակա, տարածքների մաքրման աշխատանքներին ներգրավել ափամերձ համայնքների բնակչությանը և նրանց իրազեկել մաքրման աշխատանքների արդյունքում առաջացած փայտանյութն անվճար տրամադրելու մասին.

10) ամենօրյա աշխատանքներ տանել մարզի համայնքներում աղբահանության ծառայությունը պատշաճ իրականացնելու համար, իսկ այն համայնքներում, որտեղ աղբահանություն չի իրականացվում աշխատանքներ տանել այդ գործընթացը սկսելու համար.

11) համայնքների սուբվենցիոն ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը սեղմ ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնելու համար.

12) զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհագորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար համագործակցել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների հետ ու ընտրված երեխաների ցուցակները ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան.

13) աջակցել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատին՝ «Պատիվ ունեմ» և «Ես եմ» ծրագրերի մասին ազգաբնակչությանը պատշաճ իրազեկելու և նորակոչիկների շրջանում բացատրական աշխատանքներ տանելու ուղղությամբ:

2. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքների ղեկավարներին՝ ապահովել մասնակցությունը Համահայկական ամառային 7-րդ խաղերին՝ ներգրավելով հարակից համայնքների լավագույն մարզիկներին:

3. Մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1) պատշաճ կերպով կազմակերպել և անցկացնել փոխադրական, ավարտական և պետական ավարտական քննությունները.

2) դպրոցական արձակուրդների ընթացքում՝ անհրաժեշտության դեպքում, /տնօրենի բացակայության ժամանակ /ապահովել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը և տրվող հանձնարարականների պատշաճ կատարումը.

3) աշխատանքներ տանել 2019 թվականի հունիսի 8-ի համապետական շաբաթօրյակը պատշաճ կազմակերպելու և իրականացնելու համար:

3. Միասնական քննական կենտրոն հանդիսացող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ /Գավառի N 3 հիմնական և Գավառի N 8 միջնակարգ դպրոցներ/ ավարտել քննական կենտրոններ նախապատրաստելու աշխատանքները և քննության օրերին բժիկներին ապահովել առաջին օգնության պարագաներով:

4. Մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների զինղեկներին՝

1) նախնական զինվորական պատրաստության դասասենյակները վերազինելու համար կատարել գույքագրում և անհրաժեշտ գույքի մասին տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան.

2) ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել շրջանավարտներին ռազմական ուսումնական հաստատություններում ընդգրկելու ուղղությամբ:

03.06.2019

X 

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ